

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հատոր Բ, Առաջին Սիւնեցի—Բէաւորիկէ Հոռմայեցի, Երևան, 1976, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1546 էջ:

Գիտական ամեն մի աշխատություն նախ տեղեկատվություն է (ինֆորմացիա): Եվ որքան փաստալից ու ճշգրիտ է լինում, որքան շատ նորություն է պարունակում, այնքան արժեքավոր է լինում աշխատությունը: Մատենագիտությունը գիտական ուսումնասիրության սկիզբն ու աղբյուրն է: Գիտնականն իր քննելիք նյութի վերաբերյալ առավել քաջատեղյակ է լինում, չի կրկնում արդեն ասվածը և ըստ ամենայնի նոր տեղեկատվություն է արժարժում, եթե մատենագիտական արժեքավոր աղբյուրներ է ունենում ձեռքի տակ: Կան երկեր էլ, որոնցում համատեղված են մատենագիտությունն ու գիտական ուսումնասիրությունը. այսպիսիք, թերևս, կարող են բնորոշվել իբրև կրկնակի տեղեկատվություն: Այս բնույթի է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունը»:

Այս աշխատության առաջին հատորը հրատարակության 1959 թվականն է կրում, երկրորդը՝ 1976: Անցած 13 տարիները բավական էին առաջին հատորի գիտական քննության համար: Այդ քննությունը նա փայլուն է հանձնել, դիմացել «փորձություններին», և հայոց հին ու միջնադարյան մշակույթով զբաղվող յուրաքանչյուր ոք այլևս իր աշխատանքը չի պատկերացնում առանց «Հայկական մատենագիտության», որի երկու հատորներն արդեն իսկ ամենամեծածավալն են հայ մատենագիտական բոլոր աշխատությունների մեջ:

Այս երկը հանրագիտարանի կառուցվածք ու բնույթ ունի. Մ. դ. մինչև 1800 թ.՝ շուրջ 1400 տարվա հայ գրավոր մշակույթին վերաբերող նյութերը ներկայացվում են ըստ առանձին բաժինների (կամ հոգվածների), նրանց այբբենական դասավորությամբ: Հոգվածների մեծ մասը ներկայացնում է առանձին հեղինակների՝ նրանց կենսագրությունը, վաստակը, և դրականություն նրանց մասին: Կան նաև վերնագրային-առարկայական հոգվածներ, որոնք ներկայացնում են հայ հին ու միջնադարյան «անհեղինակ» երկեր կամ առարկաներ՝ երկերի շարքով: Ի վերջո, կան հոգվածներ՝ նվիրված միջնադարյան հայ գրականության մեջ հիշված որոշ անձանց կամ աշխարհագրական տեղանունների:

Երկրորդ հատորն ընդգրկում է շուրջ 260 այգպիսի մեծ ու փոքր բաժիններ: Սկզբում դրված է հայ ձեռագրացուցակների մատենագիտության շարունակությունը (այն, ինչ չէր մտել Ա հատորում եղած նույն կարգի ջանկի մեջ)՝ 176 անուն: Հատորի վերջում կա բնագրերի սկզբնատողերի այբբենական ջանկ:

Ա հատորը ավարտվել է միմյանց հաջորդող տասը Առաքելների (Ակնեցի, Անեցի, Բաղիշեցի, Դավրիժեցի, Երեց, Դրիմեցի, Նախիչևանցի, Շոռոթեցի և այլն) նվիրված հոգվածներով, Բ հատորն սկսվում է տասնմեկերորդին՝ Առաքել Սյունեցուն նվիրված ծավալուն (89 էջ) և շատ բովանդակալից հոգվածով, որ բնութագրում է հատորի հեղինակի բանասիրական որոնումների և մատենագիտական նյութի մշակման ոճը:

Արդեն իսկ բանասիրական քաջատեղյակություն և մատենագիտական հմտություն է պետք միջնադարի այս տասնմեկ Առաքելներին, նրանց ձեռագրային, ինչպես և հրատարակված երկերը ճշգրիտ տարբերակելու և ընթերցողին նպատակասլաց ներկայացնելու համար: Սակայն ամենից դժվարինը Առաքելներից երկուսի՝ Սյունեցու և Բաղիշեցու երկերի տարբերակումն է: Անասյանը օգտագործել է նախկինում այդ Առաքելների երկերի բնագրերը կազմող ու հրատարակող կամ այդ հեղինակների գործն ուսումնասիրող բանասերների աշխատանքը, բայց ինքը իր հերթին բաղում հետազոտություններ է կատարել, ստույգ որոշել մի շարք կասկածելի երկերի հեղինակային պատկանելության հարցերը, որոշ հավանական ենթադրություններ արել: Օրինակ, Առաքել Սյունեցու քերթվածների հրատարակիչ Մ. Պոտուրյանի օգտակար աշ-

խատանքը՝ ձեռագրերում Առաջին ընդհանուր անունով պահպանված բազմաթիվ երկերի հեղինակային վերագրման գործում, Անասյանը լիովին օգտագործել է, բայց և շատ դեպքերում ճշտել է Պոստոլյանի վերագրումներն ու մանավանդ ինքր շատ ու շատ անորոշ մնացած բանաստեղծությունների հեղինակային պատկանելությունը որոշել է՝ առաջնորդվելով ձեռագրային տվյալներով (օրինակ, Առաքել Բաղիշեցու ուսուցիչ Գրիգոր Մերինցի կազմած մի գրչագիր Գանձարանի տվյալները համորեն օգտագործել է այդ նպատակով), ինչպես և բանաստեղծությունների տաղաչափական, լեզվական, ոճական հատկանիշներով և այլն: Այդպես կազմվել է Առաքել Սյունեցու երկերի ամենայնիվ մատենագիտությունը, որը ներկայացված է երկու ընդարձակ բաժիններով՝ Ձափածո և երկեր և Արձակ երկեր: Սրանք իրենց հերթին ունեն ենթաբաժիններ (օրինակ, առաջինը՝ Աստղաբաշխական տաղ, Պատմական և ներդրողական տաղեր, վիպասնական տաղեր և այլն):

Հեղինակային վերագրումների ուղղությամբ Անասյանի կատարած ռակրչական աշխատանքից հետո, այնուամենայնիվ, մնացել են Առաջին անունով ձեռագրերում գտնվող մի շարք տաղեր, որոնց հեղինակային պատկանելությունը որոշել այժմ անհնար է: Այդ տաղերի սի մասը Բաղիշեցուն կամ Սյունեցուն պետք է լինեն, իսկ մի մասն էլ այլ Առաքելների հեղինակություն:

Ճիշտ է վարվել Անասյանը իր Մատենագիտության մեջ առանձնացնելով մի հավելյալ բաժին Առաջին վարդապետ վերնագրով, որտեղ բերված են տասնմեկ Առաքելներից որևէ մեկին վերագրելու բանասիրական հիմք չընձեռող տաղերը, ինչպես և Առաքել Բաղիշեցու այն երկերը, որոնց հեղինակային պատկանելությունը Անասյանը ստույգ կամ ենթադրաբար որոշել է Ա հատորի հրատարակությունից հետո իր արած զննումների ընթացքում՝ ներառելով նաև նոր հրատարակված նյութերը, 151 սյունակ կազմող այս երկու բաժինները լրիվ պատկերացում են տալիս անասյանական աշխատանքային եղանակի մասին՝ զննել, համեմատել, ճշգրտել՝ միշտ պահպանելով բանասիրական զգուշավորությունը և, ի վերջո, ստեղծել գիտականորեն վստահելի տեղեկատվություն:

Առանձին հայ հեղինակներին նվիրված մյուս բաժիններից այս հատորում առավել ընդարձակ են ու հանգամանալից Արիստակես Հաստիվերտցուն, Բաղդասար Դպիր Կոստանդնուպոլսեցուն, Աստվածատուր Համադանեցուն, Աստվածատուր Ներսիսյանին (Ներսեսովիչ), Ավետիք Նվդոկիացուն (1-ին), Ավետիք Տիգրանակերացուն, Ասար Սեբաստացի և Գևորգ Բայրիկի բժշկներին և ուրիշների վերաբերող հոդվածները՝ բոլորը խնամված, տեղեկատվական ճոխ նյութեր պարունակող: Նշենք նաև, որ հեղինակն այս հատորի վրա աշխատելիս անասելի շանքեր պետք է թափեր ոչ միայն այնպիսի մեծ, նյութերով հարուստ բաժիններ ստեղծելիս, որպիսիք են Առաքել Սյունեցուն կամ Արիստակես Հաստիվերտցուն ու Բաղդասար Դպիրին նվիրվածները, այլ նաև մի շարք հայտնի և անհայտ հեղինակների վերաբերյալ տեղեկություններ հայթայթելու, դրանք ճշգրտելու ժամանակ: Հիշենք, օրինակ, որ այս հատորում էլ մատենագետն առիթ է ունեցել ներկայացնելու 20-ից ավելի Աստվածատուրների, է՛լ ավելի Բարսեղների, տասնհինգ Ավետիքների, նրանց կենսագրականը, երկերը, սրանց հրատարակությունները և այլն: Դրանց մեջ կան միշնագարի հայտնի և անհայտ, հիշվող ու մոռացված նույնանուն անձինք, որոնցից շատերի նույնիսկ սոսկ տարբերակումը հանրագիտական պաշար ու հետազոտական մեծ շանքեր է պահանջում:

Այլազգի հեղինակներից, որոնց երկերի հայերեն թարգմանությունները կարևոր տեղ են զբաղեցնում հայ գրավոր մշակույթի անդաստանում, հանգամանալից հոդվածներ են նվիրված Արիստոտելին, Բարսեղ Կեսարացուն, Բարթողիմեոս Բոսնացուն, Բելլարմինոսին և այլոց:

Հսկայական աշխատանքի արդյունք է Արիստոտել Ստագիրացի հոդվածը: Այնտեղ ոչ միայն կարելի է ի մի ամփոփված գտնել հին աշխարհի այս նշանավոր հույն փիլիսոփայի երկերի հայերեն թարգմանությունների հետ կապված բոլոր հարցերը, ծովածավալ ընդգրկումով, այլև մինչև հիմա հայագիտությանը բոլորովին անհայտ մնացած մի շարք նյութեր, որոնցից բավական է հիշատակել միայն մեկը: Անասյանը գտել և նկարագրել է Արիստոտելի բնագիտական երկերից մի քանիսի հայերեն թարգմանությունները, որոնք կատարված են XVIII դ. Ղուկաս Խարբերդեցու կողմից. դրանք են՝ «Ջպատմութենէ կենդանեաց», «Ջմասանց կենդանեաց», «Ջկենդանեաց քայլմանէ» (էջ 808 և 828—843): Անասյանը հայտնաբերել է նաև մի նոր արժեքավոր անուն հայ թարգմանական գրականության մեջ. Անդրուշտ Կարգաբացի հոդվածով նկարագրել է XIII դ. արաբ նշանավոր փիլիսոփա Իբն-Ռոշտի՝ արիստոտելյան երկերին նվիրված «Իհնութունների մի մասի հայերեն թարգմանությունը, ավելացնելով, որ ամենից XX դ. Սովետական Միության ուրիշ լեզուներով թարգմանություններ չեն եղել Ավերրոյսի գործերից» (էջ 1027—1028):

Երկրորդ հատորում առաջինի համեմատ կարծես ավելի տեղ են զբաղեցնում վերնագրա-
րին-առարկայական հոգվածները, գրանցից առավել կարևորներն են թվում. Աստուածաբանական
«ԲՈՒՆՈՒՄ», Աստուածաբանական-դասականական գրականություն, Աստուածաշունչ մատենան,
Առաջին-հատ, Բառարկայական ճիշդ, Բառարկայական (Բառարկայական):

2. Անասյանը նախքան այս հատորի լույս ընծայումն էլ ճանաչվել էր իբրև Աստվածաշնչի
հայերեն բնագրի ու հրատարակությունների գիտակի՝ «Հայկական մատենագիտություն» երկրորդ
հատորում գտնում ենք բովանդակությամբ ըստ ամենայնի խտացված մի բաժին՝ Աստուածա-
շունչ- սատևան. հայկական բնագիր վերնագրով: Չնայած սեղմությանը, դա հատորիս ամենա-
ընթացածակ բաժինն է դարձել՝ նյութի հսկայական ծավալի թելադրանքով: Բաժինն սկսվում է
Աստվածաշնչի հայերեն թարգմանության հանգամանքներին ու արժեքավորմանը նվիրված հոգ-
վածով, որտեղ ճշտված են այդ առթիվ եղած մի շարք ոչ հավաստի պատկերացումներ, արված
են ուղղորդվող եղանակներով: Անասյանը պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի «Աստ-
վածաշունչ» մատյանի թարգմանությունն ունեցել է որոշակիորեն երկու տարբեր հանգրվաններ
կամ, ինչպես ընդունված է, ասել, եղել են երկու թարգմանություններ: Դրանցից առաջինը, որը
մասամբ ասորերեն և մասամբ հունարեն սկզբնագրերից կատարված թարգմանություն էր,
պատկանում է հայկական տառերի գյուտից (405—406 թ.) մինչև Եփեսոսի տիեզերական ժո-
ղովն (431 թ.) ընկած շրջանին. իսկ երկրորդը, որը նախորդի վերանայումն ու սրբագրումն էր
Ռյուզանդիոնից ձեռք բերված հունարեն բնագրերի հետևությամբ, պատկանում է Եփեսոսի ժո-
ղովն անմիջականորեն հաջորդող տարիներին: Այս կապակցությամբ քննված են հարցեր,
առնչված Հին և Նոր կտակարանների հայկական կանոնի հետ, ընդ որում, կարծում ենք,
միշտ էլ վարվել հեղինակը հոգվածի վերջում այդ կանոնի ամբողջական ցանկը դնելով: Նշված է
հայերեն Աստվածաշնչի որոշ գրքերում, հատկապես Հին կտակարանում նկատված թարգմա-
նական տարբեր շերտերի իրողությունը, արված են եղբայրացություններ ու ենթադրություններ:
օրինակ, այն որ Հին կտակարանի հայերեն բնագրում նկատված երբայական բնագրի (հունա-
կան Բոթանասից թարգմանությունում չեղած) արտահայտությունները մեծ մասամբ եկել են
ասորական թարգմանությունից, ինչպես և հունական այն օրինակից, որի օգնությամբ հետա-
գայում սրբագրվել է հայկական թարգմանությունը: Հին կտակարանի վրացական թարգմանու-
թյան մեջ երբայական բնագրից եկած համարվող տարբեր Անասյանը բացատրում է հայերեն
բնագրի համանման շերտերի փոխանցմամբ:

Հոգվածում արժեքավորված են նաև հայերեն Աստվածաշնչի կանոնի և լեզվական-բնագրա-
կան հարադասության հարցերը:

Այս հոգվածն իր տողատակի մատենագիտական-բանասիրական բազում նշումներով ամեն
մի հայագետ բանասերի համար խիստ պիտանի տեղեկատու է: Հոգվածին հաջորդող «Հայկա-
կան բնագրի տպագրություններ» բաժնում նյութը ներկայացված է հետևյալ կերպ. նախ տրված
են ամբողջական հրատարակությունները, ապա՝ Սաղմոսարանների, Հին կտակարանի այլ գրքերի
հրատարակությունները և այնուհետև՝ Նոր կտակարանի ամբողջական և առանձին մասերի հրա-
տարակությունները: Դրանից հետո զրված է «Հայկական բնագրի թարգմանություններ» բաժինը
և, ի վերջո, նյութի վերաբերյալ հետազոտական-քննական գրականության մի ցանկ (հետազո-
տություններին նվիրված գրախոսություններով հանդերձ): Այս վերջինը ընտրովի ցանկ է և,
այնուամենայնիվ, պատկառազու՝ իր ծավալով:

Հայկական բնագրի ամբողջական հրատարակությունների սկզբում Անասյանն իրավացիոր-
ենն գրել է Ս. գրքի Նոր Ջուղայի անավարտ հրատարակությունը (կատարված 1850-ական թթ.
սկզբին), որից թեև որևէ էջ չի հայտնաբերվել, բայց, որի գոյությունը կասկածից վեր է: Առ-
հասարակ նկատվում է հեղինակի ջանադիր աշխատանքը աստվածաշնչային գրքերի Սահակ-
Սևրոպյան թարգմանության հրատարակությունները հնարավոր ամբողջությամբ ընդգրկելու
ուղղությամբ: Եվ դա հաջողվել է: Կուզեինք հատկապես նշել տպագիր Սաղմոսարանների ցանկը.
մինչև օրս փաստորեն այդպիսին չենք ունեցել, քանի որ եղածները (Գ. Զարբհանալյանի և
այլն) ոչ միայն չափազանց թերի են, այլև սխալաշատ: Անասյանը ներկայացրել է լիակատա-
րությամբ շատ մոտ մի մատենագիտություն՝ հիշատակարանային հատվածներով և իր ուղղորդվող
ծանոթագրություններով:

Հայկական բնագրի թարգմանությունների մեջ տրված են աշխարհարար, հայատառ թուր-
քերեն ու ղփչազերեն (կոմաներեն), լատիներեն, պարսկերեն, արաբերեն, վրացերեն թարգմա-
նությունները՝ ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր: Վերջիններիս նշումը կարևոր է և տալիս է
արժեքավոր տեղեկանքներ, օրինակ, թեկուզ այն մասին, որ կա Ավետարանի՝ Պերճ Պոռչյանի

կատարած աշխարհարար թարգմանության ձեռագիրը կամ, որ տոկա են պարսկերեն հինգ թարգմանությունների ձեռագրերը և այլն:

Հատորի մեջ «Աստուածաշունչ» մատենան. հայկական բնագիրը բաժինը մի անախի ուսումնասիրություն է, որ առանձին առնված էլ կարևոր երևույթ է հայ բանասիրության և մատենագիտության ասպարեզներում և պատիվ կրեցեր ամեն մի ակադեմիկոս հայագետին:

Այսպես կարելի է նաև դրվատական շատ խոսքեր ասել «Հայկական մատենագիտության» այս հատորի մյուս հեղինակային և վերնագրա-առարկայական մեծ ու փոքր բաժինների ու հոդվածների մասին: Ամեն մի աշխատություն պետք է գնահատվի ըստ այն արժեքավորի, որ կա նրա մեջ, և եթե այդ ավանդը նշանակալից է, ապա թերիները երկրորդական, երրորդական են դառնում: Այսպիսին է Հ. Անասյանի աշխատասիրության այս հատորը ևս:

Առաջին հատորում իբրև իր ներածության բնաբան հեղինակը դրել էր միջնադարյան հայ մատենագետ Գրիգոր Աբասյանի (Աբասի որդու) մի ասույթը. «Գիտութիւն գրոց ծով է անհզր և անհաս, և լի՞ք զբաւանգակն իմանալ ումեք ըստ արժանւոյն, ալ զսակաւս ի բազմացն»: Իհարկե, Անասյանի մատենագիտությունն ընդգրկել է իր նյութի ոչ թե զսակաւս, ալ զբաւանգն ի բազմացն, բայց և որոշ անխուսափելի պակասներով, և, կարող ենք վստահորեն ասել՝ հնարավոր ավելի քիչ թերիներով... Երկու խոսք այդպիսիներից մեկի մասին, Հատորում առանձին հոդվածով ներկայացված է «Արհեստ համարողութեան» դիրքը (Մարսել, 1675 թ.): Դրա մասին եղած գրականության ցանկում նշված է երեք անուն՝ Ա. 'Լագրիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը» (1909 թ.) և Գ. Պետրոսյանի երկու աշխատությունները (1959 թ.): Դրանում այդ գրքի մասին ավելի շատ է գրվել. օրինակ, Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտությունում» (1883 թ., էջ 70) բերված է «Արհեստը» և արված ենթադրություն այն մասին, թե նրա թարգմանիչը Հովհ. Հովսեփ Կոստանդնուպոլսեցին է: Զի նշված Ա. Ալպոյաճյանի «Պատմություն հայ դպրոցի» աշխատությունը (1946 թ.), որտեղ (էջ 417) «Արհեստը» համարվում է թարգմանություն իտալերենից, Հ. Դավթյանի «Աշխարհարար դիրքը հայ տպագրությունից մինչև 1850 թվականը» երկը (1964, էջ 10—13, 98), որտեղ Հովհ. Կոստանդնուպոլսեցու թարգմանիչ լինելը կասկածի տակ է առնված, Գ. Պետրոսյանի մի հոդվածը («Սոցիալական Հայաստան», 1969, № 170), որ տեղեկացվում է «Արհեստի» լատիներեն բնագրի՝ ու նրա գերմանացի հեղինակի (Քր. Կլավիուս) մասին, «Երաբեր հասարակական գիտություններին» ամսագրում տպագրված մի հոդված (1973, № 9, էջ 92—106), որտեղ քննված է «Արհեստի» լեզուն:

Պետք է ասել, որ նման պակասների մի մասը (ուստի և նրանց պարունակած նորուշունները) «Հայկական մատենագիտության» այս հատորի մեջ չէր էլ կարող տեղ գտնել: Հատորի 86-րդ էջում կա մի ծանոթագրություն, որից պարզվում է, որ 1971 թ. հատորը շարվելու ընթացքի մեջ է եղել: Հատորն ավարտվել և խմբագրված հրատարակչություն է հանձնվել 1967 թ. սկզբին: Ճիշտ է, դրանից հետո լույս տեսած որոշ երկեր արտահայտվել են հատորի մեջ՝ նրա տպագրության ընթացքում, բայց, հասկանալի է, որ նրանց մի մասը պետք է դուրս գնար ավարտուն գրքից. այդ կերպ դուրս են մնացել նաև «Արհեստի» մասին 1967 թ. հետո հրատարակված նյութերը և նրանցում եղած տեղեկատվությունը:

«Հայկական մատենագիտության» Բ հատորում կարելի է նշել ուրիշ կարգի հատուկանոթներ (օրինակ, Բաղդասար Դպիրի մասին 1063-րդ սյունակում ասված է՝ «Մեռ. 1768 թ.» և ապա՝ «Բաղդասար Դպիրը 1792 թ. Քում-քափուում (Կ. Պոլիս) հաստատված պատրիարքական Մայր-դպրատան ղեկավար է նշանակվել»): Այդպիսիք անհնար է, որ չլինեն խտացված տեղեկատվությամբ այսքան բազմահարուստ աշխատության մեջ: Զարմանալ կարելի է միայն, որ մի անձը կարողացել է հնարավոր նվազագույնին հասցնել մարդկային բնության անքակտելի մասը կազմող սխալներ թույլ տալու հատկությունը:

Կարծում ենք, հաջող են գտնված ու տրված նաև հղումների շարքերը անձանց, երկերի, առարկաների մեկ անվանումից դեպի մյուսը. ինչպես, օրինակ, շատ երկերի Բաճ կամ Բաճի բառերով սկսվող վերնագրերից («Բան բուսաբանական», «Բանք իմաստութեան» և այլն) հղումներ են տրված դեպի հեղինակները կամ վերնագրերի այլ՝ ավելի որոշակի տարբերակները: Նման հղումներ կան նաև Բաճալի բառով սկսվող վերնագրերից և այլն:

Վերն ասացինք, որ Անասյանի այս երկը իր երկու հատորով արդեն իսկ ամենածավալուն է հայ մատենագիտական եղած բոլոր հրատարակություններից: Այժմ պետք է ավելացնենք, որ այն նաև ընդգրկած նյութերով ամենահարուստն է և մանավանդ ամենաստույգը:

Ակնհայտ արժանիքներից բացի, Անասյանի այս երկում ուշագիտ աչքը նկատում է թաղում «անշնան» թվացող «մանրուքներ», որոնք, սակայն, հեղինակի մտքի անընդհատ աշխատանքի,

որոնման, ծանրութիւնի արդյունք են: Օրինակ, ո՞րն ընդունել բանասիրության մեջ գործածված՝ Թոխաքցի, Թոփառցի, Եվդոկիացի, Թոխաքեցի անվանաձևերից կամ գրել Մաշիկիա, Մաւսիկա, Մաւսել, թե՞ Մաւսելյ, և կամ Պաղտասա՞ր ձևն ընդունել, թե՞ Բաղդասար և այլն: Անասյանը կարողանում է յավագույն վճիռներն ընդունել (բերված օրինակներում վերջին ձևերն են բնական), անկասկած՝ երկար մտածումներից, ինքնաստուգումներից հետո: Այսպիսի հարյուրավոր որոնումներ ու վճիռներ կան «Հայկական մատենագիտության» մեջ:

Դրվել է Անասյանի հետախույզ մտքի, բանասիրության ասպարեզ բերած բազում նորությունների մասին, բայց թվում է, որ ասվածն, այնուամենայնիվ, լրիվ չի ներկայացնում «Հայկական մատենագիտությամբ» հայագիտության ասպարեզ բերված արժեքների ծավալը. ով առիթ է ունեցել օգտվելու այս սքանչելի հանրագիտարանից, դիտել է, անշուշտ, որ նրանում հայտնագործումները, նորությունները, ուշագրավ կռահումները, սրամիտ, հավանական վարկածներն ամենուրեք են:

2. Անասյանի «Հայկական մատենագիտությունը» հարստությամբ բացառիկ երկ է, կարևորությամբ չփոխարինվող: Դա հանրագիտական հազվագյուտ ու ինքնօրինակ արժեքի աշխատություն է:

ՌԱՅԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Բաճասիրական գիտությունների դեկտոր